

(albūmīnurie), յօդացաւ, ջղասպառութեան ապաքինման շրջան, դըժուարամարտութիւն և աղիքներու նեխում (քէֆիր կամ մածուն), մանրէածին հիւանդութեանց պատճառած փորհարութիւն (մածուն):

Աղիքներու, մանաւանդ լայն աղիքի զանազան բորբոքումներու ընթացքին, որոնք կը յայտնուին որոշ նշաններով, անյարմար է կաթնային սննդապահութիւն յանձնաբարել. բայց ատիկա միայն բժիշկը պիտի ըսէ:

Կաթին անպատեհութիւնները. — Կ'ըսուի թէ երկար ժամանակ կաթ գործածելով կազմուածքին մէջ երկաթը կը պակսի: Աւելի կարեւորը այն է, որ կաթը երբեմն փորհարութիւն կամ պնդութիւն կամ ստամոքսի թթուութիւն կը պատճառէ: Երբ կը տեսնուի որ, կաթը չի յարմարէիր ենթակային կազմուածքին, պէտք է քիչ քիչ տալ (երկու ժամը մէկ անգամ գաւաթ մը), եռացնելով՝ քանակը պակսեցնել, մածուն տալ, ալիւրապուրի հնտ խառնել, իւզն ու սերը քաշել, կրաջուր աւելցնել (փորհարութեան պարագային): Ինչ ալ ըլլայ, բացարձակ կաթնային սննդապահութիւնը երկար պէտք չէ տեսէ և ժամանակ մը յետոյ, պարագային համեմատ, պէտք է աւելցնել բուային սննդապահութիւնը:

Բժ. ԵՐ. ԳՐԳՈՅԵԱՆ

ԱՂՄՈՒԿԻՆ ԱՁԴԵՑՈՒԹԻՒՆԸ, — Գոլկաթի համալսարանին հոգեւրանութեան աշխատանոցին մէջ, ուսանողները զանազան փորձեր կատարեցին հասկնալու համար աղմուկին ազդեցութիւնը մարդոց վրայ քունի կամ աշխատանքի պահուն:

Մասնաւոր մեքենայ մը շինուած էր, որ աղմուկ կը յարուցանէր պահանջուած աստիճաններով: Փորձի սեննեակը խորանարդ էր իւրաքանչիւր կողմէ 10 ոտք երկարութեամբ: 0դը կը փոխուէր մասնաւոր հովահարով մը ամէն երկու վայրկեանը մէկ անգամ: Ուսանող մը իոն նստած թուաբանական հաշիւ կ'ընէր: Փորձը ցոյց տըւաւ, որ ուսանողը աղմուկին ազդեցութեան տակ աւելի թթուածինի պէտք ունի:

Փորձերը շարունակուելով քունի պահուն, տեսնուեցաւ որ աղմուկին պատճառով քնացողին արեան միջին ճնշումը կը բարձրանայ: Քունէն ընդուստ արթնալն ալ կը բարձրացնէ արեան ճընշումը:

Փորձեր կը կատարուին իմանալու համար թէ աղմուկը արգելը է քնանալու, ինչպէս նաեւ ուրիշ փորձեր. հասկնալու համար աղմուկին աղդեցութիւնը մուկերուն վրայ, եւայլ: